

Նախագիծ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝  
«ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության  
բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ  
Արձանագրություն N \_\_\_/\_\_\_\_\_/ 2010թ.

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ՄԱՍԻՆ



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտ 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	3
Հոդված 1. Ընդհանուր դրույթներ .....	3
Հոդված 2. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) գործառույթները .....	3
ԳԼՈՒԽ 2. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ .....	3
Հոդված 3. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ձևավորման կարգը .....	3
Հոդված 4. Վերստուգող հանձնաժողովի նախագահը .....	3
Հոդված 5. Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) պարզևատրումը .....	4
ԳԼՈՒԽ 3. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԱՆԴԱՄԻ ՊԱՏԱՍԵԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ .....	4
Հոդված 6. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավունքներն ու պարտականությունները .....	4
Հոդված 7. Վերստուգող հանձնաժողովի անդամի (վերստուգողի) պատասխանատվությունը .....	5
ԳԼՈՒԽ 4. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԿՈՂՄԻՑ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ .....	5
Հոդված 8. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից ստուգումների անցկացման կարգը .....	5
Հոդված 9. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից արտահերթ ստուգման մասին պահանջի ներկայացման կարգը .....	5
Հոդված 10. Ստուգման անցկացման ժամկետները .....	6
ԳԼՈՒԽ 5. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ .....	7
Հոդված 11. Վերստուգող հանձնաժողովի նիստերը .....	7
Հոդված 12. Վերստուգող հանձնաժողովի որոշումները .....	8
ԳԼՈՒԽ 6. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ....	8
Հոդված 13. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերը .....	8
Հոդված 14. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) նիստի արձանագրությունը .....	8
Հոդված 15. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ակտը .....	8
Հոդված 15. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը .....	9
Հոդված 15. Այլ փաստաթղթեր .....	9
Հոդված 16. Վերստուգող հանձնաժողովի փաստաթղթերի պահպանումը .....	9

## ՉԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը մշակված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության և պահանջներին համապատասխան և կարգավորում է Ընկերության վերստուգող հանձնաժողովի /այսուհետ՝ «Վերստուգող հանձնաժողովի»/ (վեստուգողի) գործունեությունը:
2. Սույն կանոնակարգը սահմանում է Վերստուգող հանձնաժողովի (վեստուգողի) ձևավորման կարգը, Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման կարգը, Վերստուգող հանձնաժողովի (վեստուգողի) նիստի անցկացման և որոշումների ընդունման կարգը, Վերստուգող հանձնաժողովի անդամների (վեստուգողի) իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Վերստուգող հանձնաժողովի (վեստուգողի) գործունեության հետ կապված այլ հարցեր:

### Հոդված 2. Վերստուգող հանձնաժողովի (վեստուգողի) գործառույթները

1. Վերստուգող հանձնաժողովը (վեստուգողը) հանդիսանում է Ընկերության, նրա մարմինների, պաշտոնատար անձանց, ստորաբաժանումների և ծառայությունների ֆինանսատնտեսական գործունեության վերահսկող մարմին (անձ):
2. Իր գործունեության ընթացքում Վերստուգող հանձնաժողովը (վեստուգողը) առաջնորդվում է օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի որոշումներով:
3. Վերստուգող հանձնաժողովի (վեստուգողի) իրավասությունները սահմանվում են օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:

## ՉԼՈՒԽ 2. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

### Հոդված 3. Վերստուգող հանձնաժողովի (վեստուգողի) ձևավորման կարգը

1. Վերստուգող հանձնաժողովի ամբողջ կազմի կամ նրա առանձին անդամի (վերահսկողի) լիազորություններն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են վաղաժամկետ դադարեցվել: Վերստուգող հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում մյուս անդամների լիազորությունները չեն դադարեցվում:
2. Եթե Վերստուգող հանձնաժողովի անդամների թիվը նվազում է երկուսից, ապա Ընկերության տնօրենների խորհուրդը Վերստուգող հանձնաժողով ընտրելու նպատակով պարտավոր է գումարել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Մինչև Վերստուգող հանձնաժողովի նոր կազմի ընտրությունները Վերստուգող հանձնաժողովի գործող անդամն իրականացնում է իր գործառույթները:

### Հոդված 4. Վերստուգող հանձնաժողովի նախագահը

1. Վերստուգող հանձնաժողովն իր առաջին նիստում Վերստուգող հանձնաժողովի կազմից ընտրում է Վերստուգող հանձնաժողովի նախագահ:
2. Վերստուգող հանձնաժողովի նախագահը կարող է վերընտրվել Վերստուգող հանձնաժողովի կազմում ընտրված անդամների ձայների մեծամասնության կողմից:
3. Վերստուգող հանձնաժողովի նախագահը (վեստուգողը).
  - ձևավորում է նիստի օրակարգը,
  - գումարում և անցկացնում է նիստը,
  - կազմակերպում է ընթացիկ աշխատանքները,

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, Ընկերության տնօրենների խորհրդի նիստերին և գլխավոր տնօրենին ներկայացնում է Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողին),
  - ստորագրում է Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերը:
4. Վերստուգող հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացվում են Վերստուգող հանձնաժողովի անդամներից մեկի կողմից:

#### **Հոդված 5. Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) պարզևատրումը**

1. Ընկերությունը՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է Վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) վճարել պարզևավճար կամ փոխհատուցել նրանց (նրա) գործունեության հետ կապված ծախսերը: Պարզևավճարի կամ ծախսերի փոխհատուցման չափերը, դրանց վճարման կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության տնօրենների խորհրդի եզրակացության հիման վրա:
2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) իրենց պարտականությունների կատարման համար պարզևավճարի վճարման կամ ծախսերի փոխհատուցման հարցը դիտարկում է որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի առնաձին հարց:

#### **ԳԼՈՒԽ 3. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԱՆՂԱՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Հոդված 6. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավունքներն ու պարտականությունները**

1. Իր գործառույթներն իրականացնելու համար Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի՝
  - ստուգումների ընթացքում Ընկերության մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից պահանջել ստուգման իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ (նյութեր, փաստաթղթեր),
  - պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներից, գլխավոր տնօրենից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, պաշտոնատար այլ անձանցից, նյութական պատասխանատվություն կրող անձանցից, աշխատակիցներից ստուգումների ընթացքում առաջացող հարցերի վերաբերյալ բանավոր և գրավոր բացատրություններ,
  - Ընկերության աշխատակիցների, ներառյալ՝ պաշտոնատար անձանց կողմից, Ընկերության կանոնադրության, ներքին իրավական ակտերի և պաշտոնական հրահանգների պահանջների խախտման փաստեր բացահայտվելու դեպքում նրանց կարգապահական և/կամ նյութական պատասխանատվության ենթարկելու մասին հարց ուղղել Ընկերության համապատասխան մարմիններին,
  - սահմանված կարգով պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի նիստի կամ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում, եթե ստուգման ընթացքում բացահայտված խախտումներն Ընկերության շահերին վնաս են հասցրել (կարող են վնաս հասցնել) և անհրաժեշտ գործողությունների ձեռնարկումը (որոշումների ընդունումը) մտնում են նշված մարմինների իրավասությունների մեջ:
2. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է.
  - Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում իրականացնել՝ տարեկան արդյունքներով, ինչպես նաև օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և սույն կանոնակարգով արտահերթ ստուգում նախաձեռնելու իրավունք ունեցող անձանց պահանջով,

- տալ Ընկերության տարեկան հաշվետվություններում, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներառվող տվյալների արժանահավատության գնահատական,
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին, տնօրենների խորհրդին և գլխավոր տնօրենին ժամանակին տրամադրել տեղեկություններ իրականացված ստուգման արդյունքների մասին՝ ակտի և եզրակացության տեսքով,
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին, տնօրենների խորհրդին օպերատիվ կերպով տեղեկացնել ֆինանսատնտեսական գործառնությունների անարդյունավետության և չհիմնավորվածության, Ընկերության պաշտոնատար անձանց կողմից օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին իրավական ակտերի խախտումների բացահայտված փաստերի մասին,
- Վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) ստուգման ընթացքում հայտնի դարձած ծառայողական տեղեկությունները չբացահայտել և պահպանել առևտրային գաղտնիքը,
- կատարել Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների արձանագրում,
- ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել բաժնետերերի հարցերին:

#### **Հոդված 7. Վերստուգող հանձնաժողովի անդամի (վերստուգողի) պատասխանատվությունը**

- Վերստուգող հանձնաժողովի անդամը (վերստուգողը) կրում է պատասխանատվություն.
- Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից ստացված փաստաթղթերը և նյութերը կորցնելու, վնասելու կամ կեղծելու համար,
  - Ընկերության առևտրային և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման համար,
  - Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների անբարեխիղճ անցկացման և Ընկերության մարմիններին ստուգման եզրակացությունը և ակտը ժամանակին չդրամադրելու համար,
  - այլ դեպքերում՝ իր պարտականությունների անբարեխիղճ կատարման համար:

#### **ԳԼՈՒԽ 4. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԿՈՂՄԻՑ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

#### **Հոդված 8. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից ստուգումների անցկացման կարգը**

1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է Ընկերության մեկ տարվա գործունեության արդյունքներով (հերթական ստուգում) կամ ցանկացած ժամանակ՝ օրենսդրության, Ընկերության կանոնադրության և սույն կանոնակարգին համապատասխան ստուգման նախաձեռնության իրավունք ունեցող անձի որոշմամբ կամ պահանջով (արտահերթ ստուգում):
2. Արտահերթ ստուգման ընթացքում կարող են ստուգվել, ինչպես Ընկերության առանձին տնտեսական գործառնության ոլորտները, այնպես էլ առանձին ժամանակահատվածի համար իրականացված տնտեսական գործառնությունները:

#### **Հոդված 9. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից արտահերթ ստուգման մասին պահանջի ներկայացման կարգը**

1. Արտահերթ ստուգում իրականացվում է ցանկացած ժամանակ Ընկերության բաժնետերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի որոշմամբ, Վերստուգող հանձնաժողովի նախաձեռնությամբ և Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր բաժնետերերի (բաժնետիրոջ) պահանջով:
2. Արտահերթ ստուգում նախաձեռնող անձինք (մարմինները) մինչև Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից արտահերթ ստուգման մասին որոշում ընդունելը

- կարող են հետ կանչել իրենց պահանջը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին):
3. Արտահերթ ստուգում նախաձեռնող բաժնետերերը (բաժնետերը) Վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին) ներկայացնում է արտահերթ ստուգման անցկացման գրավոր պահանջ, որը պետք է ներառի՝
    - պահանջ ներկայացնող բաժնետերերի (բաժնետիրոջ) անունը, ազգանունը (անվանումը),
    - իրենց (իրեն) պատկանող բաժնետոմսերի մասին տեղեկություններ (քանակ, տեսակ, դաս),
    - արտահերթ ստուգման անցկացման անհրաժեշտության հիմնավորումը:
  4. Ներկայացված պահանջը ստորագրվում է բաժնետերերի (բաժնետիրոջ) կամ նրանց (նրա) ներկայացուցչի կողմից: Պահանջը ներկայացուցչի կողմից ստորագրվելու դեպքում դրան կից ներկայացվում է համապատասխան լիազորագիրը (կամ նոտարական կարգով հաստատված լիազորագրի պատճենը) կամ այլ փաստաթղթեր, որոնք կհավաստեն ներկայացուցչի՝ բաժնետիրոջ անունից գործելու իրավունքը:
  5. Իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ կողմից արտահերթ ստուգման պահանջի ներկայացման դեպքում բաժնետիրոջ անունից առանց լիազորագրի գործող ներկայացուցչի ստորագրությունը վավերացվում է բաժնետիրոջ կնիքով: Եթե պահանջը ստորագրվել է իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ անունից լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչից, ապա պահանջին կից ներկայացվում է բաժնետիրոջ անունից տրված լիազորագիրը (կամ նոտարական կարգով հաստատված լիազորագրի պատճենը) կամ այլ փաստաթղթեր, որոնք կհավաստեն ներկայացուցչի՝ բաժնետիրոջ անունից գործելու իրավունքը:
  6. Արտահերթ ստուգման պահանջ ներկայացրած բաժնետերը պետք է ընկերություն ներկայացնի արժեթղթերի հաշվի քաղվածք, որը կհաստատի պահանջ ներկայացնելու օրվա դրությամբ իրեն պատկանող ընկերության քվեարկող բաժնետոմսերի քանակի մասին տեղեկություններ:
  7. Արտահերթ ստուգման պահանջը պատվիրված նամակով ուղարկվում է ընկերության գտնվելու վայրի հասցեով կամ ներկայացվում է ընկերություն առձեռն՝ Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անունով:
  8. Բաժնետերերի (բաժնետիրոջ) կողմից արտահերթ ստուգման պահանջի ներկայացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) պետք է ընդունի արտահերթ ստուգման կամ դրա մերժման մասին որոշում: Պահանջի ներկայացման օր է համարվում այն ընկերության կողմից ստանալու օրը:
  9. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից կարող է արտահերթ ստուգման մերժման մասին որոշում ընդունվել հետևյալ դեպքերում.
    - պահանջ ներկայացնող բաժնետերերը (բաժնետերը) չեն հանդիսանում ընկերության քվեարկող բաժնետոմսերի անհրաժեշտ քանակի սեփականատեր,
    - արտահերթ ստուգման հիմք հանդիսացող փաստերի վերաբերյալ արդեն իրականացվել է ստուգում և Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից կազմվել է համապատասխան եզրակացություն,
    - ներկայացված պահանջը չի համապատասխանում օրենսդրության, ընկերության կանոնադրության և սույն կանոնակարգի պահանջներին:
  10. Արտահերթ ստուգման պահանջ ներկայացրած բաժնետերերը (բաժնետերը) նույն հիմքով արտահերթ ստուգման նոր պահանջ իրավունք ունեն ներկայացնել միայն նախորդ պահանջի ներկայացման օրվանից 120 օր հետո:

#### **Հոդված 10. Ստուգման անցկացման ժամկետները**

1. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հերթական ստուգման արդյունքների մասին եզրակացությունը և ընկերության տարեկան հաշվետվությունում, այդ թվում տարեկան ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տվյալների արժանահավատության կամ դրա հերքման մասին եզրակացությունը ընկերության

- տնօրենների խորհրդին է տրամադրում Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովի գումարման օրվանից առնվազն 40 օր առաջ:
2. Բաժնետերերի (բաժնետիրոջ) պահանջի հիման վրա արտահերթ ստուգումը պետք է սկսվի պահանջի ներկայացման պահից ոչ ուշ քան 30 օր հետո:  
Նման ստուգման անցկացման ժամկետը չպետք է գերազանցի 30 օրը, սակայն այն կարող է Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) որոշմամբ երկարաձգվել:
  3. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի որոշման հիման վրա արտահերթ ստուգումը պետք է սկսվի բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը Վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին) տրամադրելու կամ տնօրենների խորհրդի նիստ գումարելու օրվանից ոչ ուշ քան 30 օր հետո:
  4. Վերստուգող հանձնաժողովի անդամի (վերստուգողի) կողմից արտահերթ ստուգում իրականացնելու պահանջ ներկայացնելու պահից 5 օրվա ընթացքում Վերստուգող հանձնաժողովի նախագահը (վերստուգողը) պետք է որոշում ընդունի Վերստուգող հանձնաժողովի նիստի գումարման մասին (վերստուգողի դեպքում՝ արտահերթ ստուգման մասին որոշում):  
Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից արտահերթ ստուգում անցկացնելու մասին որոշում ընդունելու դեպքում Վերստուգող հանձնաժողովի նախագահը (վերստուգողը) պարտավոր է կազմակերպել ստուգման աշխատանքները և ձեռնարկել դրա անցկացումը:

## ՉԼՈՒԽ 5. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

### Հոդված 11. Վերստուգող հանձնաժողովի նիստերը

1. Ստուգումների անցկացման կազմակերպչական հարցերը որոշվում են Վերստուգող հանձնաժողովի նիստերի ընթացքում: Վերստուգող հանձնաժողովի նիստերը գումարվում են ստուգումից առաջ, նրա արդյունքների ստացումից հետո և այն դեպքերում, երբ պահանջվում է Վերստուգող հանձնաժողովի անդամների համատեղ որոշում: Անհետաձգելի որոշում պահանջող խախտումների բացահայտման դեպքում Վերստուգող հանձնաժողովի անդամն իրավունք ունի պահանջել Վերստուգող հանձնաժողովի նիստի գումարում:
2. Վերստուգող հանձնաժողովի նիստերը գումարվում են Վերստուգող հանձնաժողովի անդամների համատեղ ներկայության եղանակով՝ նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ համապատասխան որոշումների կայացման համար:
3. Վերստուգող հանձնաժողովի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե նրան մասնակցում են Վերստուգող հանձնաժողովի քանակական կազմի կեսից ավելին:
4. Ստուգումներից առաջ գումարվող նիստի ընթացքում որոշվում են՝
  - ստուգման անցկացման հետ կապված բոլոր կազմակերպչական հարցերը,
  - ստուգման անցկացման պատասխանատու անինք:
5. Վերստուգող հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել Վերստուգող հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձինք՝ Ընկերության գլխավոր տնօրենը, պաշտոնատար անձինք և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները, Ընկերության աուդիտորի ներկայացուցիչները, փորձագետներ, խորհրդատուներ և Վերստուգող հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված այլ անձինք,
6. Վերստուգող հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել Ընկերության տնօրենների խորհրդի նիստերի հետ համատեղ: Համատեղ անցկացվող նիստերի ընթացքում կարող են քննարկվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝
  - Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների մասին Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը,
  - Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների ստուգման արդյունքների մասին Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը,
  - Ընկերության տարեկան հաշվետվության մեջ ընդգրկված տվյալների արժանահավատության մասին Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը:



## Հոդված 12. Վերստուգող հանձնաժողովի որոշումները

1. Վերստուգող հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, իսկ եզրակացությունները և ակտերը հաստատվում են Վերստուգող հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների մեծամասնության կողմից: Վերստուգող հանձնաժողովի նիստում Վերստուգող հանձնաժողովի անդամները քվեարկում են «մեկ անդամ մեկ ձայն» սկզբունքով: Քվեարկության ընթացքում չի թույլատրվում ձայնի իրավունքի փոխանցում այլ անձի, այդ թվում՝ Վերստուգող հանձնաժողովի այլ անդամի: Հավասար ձայնի դեպքում Վերստուգող հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
2. Վերստուգող հանձնաժողովի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Վերստուգող հանձնաժողովի անդամն իրավունք ունի պահանջել նիստի արձանագրության մեջ գրառել հատուկ կարծիք և դրա մասին իրազեկել Ընկերության կառավարման մարմիններին և բաժնետերերին:
3. Վերստուգող հանձնաժողովի եզրակացության (ակտի) հետ համաձայն չլինելու դեպքում Վերստուգող հանձնաժողովի անդամն իրավունք ունի պատրաստել հատուկ կարծիք, որը կցվում է Վերստուգող հանձնաժողովի եզրակացությանը (ակտին) և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:
4. Եթե Վերստուգող հանձնաժողովի անդամը չի ստորագրել եզրակացությունը (ակտը) և չի պատրաստել հատուկ կարծիք, ապա եզրակացության (ակտի) մեջ դրա պատճառների մասին պետք է նշում կատարվի:

## ԳԼՈՒԽ 6. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ՓԱՍՏԱԹՅՈՒՆԵՐԸ

### Հոդված 13. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերը

1. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերին են դասվում.
  - Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) արձանագրությունները,
  - Ստուգման արդյունքների մասին Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ակտերը,
  - Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունները,
  - Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) գործունեության հետ կապված այլ փաստաթղթեր:
2. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերը կարող են չկնքվել Ընկերության կնիքով:

### Հոդված 14. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) նիստի արձանագրությունը

1. Վերստուգող հանձնաժողովի նիստի ավարտից հետո 5 օրվա ընթացքում կազմվում է նիստի արձանագրություն:
2. Վերստուգող հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ նշվում է.
  - Ընկերության լրիվ ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,
  - Վերստուգող հանձնաժողովի նիստի անցկացման տարին, ամիսը և ամսաթիվը և վայրը,
  - Վերստուգող հանձնաժողովին մասնակցող անձինք,
  - նիստի օրակարգը,
  - քվեարկության դրված հարցերի ձևակերպումները և քվեարկության արդյունքները,
  - ընդունված որոշումները,
  - ընդունված որոշումների վերաբերյալ հատուկ կարծիք հայտնող անձինք:
3. Վերստուգող հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրվում է վերստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

### Հոդված 15. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ակտը

1. Ստուգման արդյունքներով կազմվող Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ակտում նշվում է.
  - ստուգման անցկացման տարին, ամիսը և ամսաթիվը և վայրը,
  - ստուգմանը մասնակցած Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը),



- ստուգման անցկացման հիմքերը,
  - բացահայտված խախտումների նկարագիրը,
  - խախտում թույլ տրված անձի մասին նշում:
2. Վերստուգող հանձնաժողովի ակտերը ստորագրվում են ստուգմանը մասնակցած Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) կողմից:

### **Հոդված 15. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը**

1. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության մեջ նշվում է.
- օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին իրավական ակտերի պահանջների խախտումների կամ դիտարկումների մասին եզրարկությունը,
  - Ընկերության տարեկան հաշվետվություններում, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատականը,
  - ստուգումների ընթացքում Ընկերության մարմիններին, ստորաբաժանման ղեկավարներին և պաշտոնատար անձանց պահանջվող տեղեկությունների (փաստաթղթերի, նյութերի) տրամադրման մասին տեղեկություններ,
  - տեղեկությունների (փաստաթղթերի, նյութերի) տրամադրման մերժման դեպքերի մասին տեղեկություններ,
  - տեղեկություններ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի նիստի գումարման Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջների ներկայացման մասին,
  - Ընկերության գլխավոր տնօրենի, տնօրենների խորհրդ անդամների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների գրավոր բացատրությունների մասին տեղեկություններ,
  - Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից կատարված խախտումների նկարագրերը:
2. Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը ստորագրվում են Վերստուգող հանձնաժողովի բոլոր անդամների (վերստուգողի) կողմից:

### **Հոդված 15. Այլ փաստաթղթեր**

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) այլ փաստաթղթերը ստորագրվում են Վերստուգող հանձնաժողովի նախագահի (վերստուգողի) կողմից:

### **Հոդված 16. Վերստուգող հանձնաժողովի փաստաթղթերի պահպանումը**

1. Վերստուգող հանձնաժողովի նախագահը (վերստուգողը) ապահովում է հետևյալ փաստաթղթերի պահպանումը՝
- Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերը,
  - ստուգման անցկացման մասին պահանջները,
  - Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից ստուգման անցկացման մերժումները,
  - տեղեկությունների տրամադրման Ընկերության պաշտոնատար անձանց գրավոր մերժումները:
2. Պահպանման նպատակով Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերի բնօրինակները Վերստուգող հանձնաժողովի նախագահի (վերստուգողի) կողմից փոխանցվում են Ընկերության կորպորատիվ քարտուղարին, որի վերաբերյալ կազմվում է համապատասխան ակտ:
3. Ընկերության կորպորատիվ քարտուղարն ապահովում է բաժնետերերին վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացություններին հասանելիությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ծավալով:
4. Բաժնետիրոջ գրավոր պահանջի հիման վրա Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության պատճենը, որի համար Ընկերությունը կարող է գանձել Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության պատճենի պատրաստման համար կատարված ծախսերը: